



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 11

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2021 Թ. ՀՈՒԼԻՍԻ 6 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՌՑԱՆՑ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. 2020 – 2021 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում /զեկուցող՝ Ա. Սարգսյան/:
2. Հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների և մանկավարժի որակավորման պետական քննությունների արդյունքների ամփոփում:
Պետական քննական հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը:
3. Մագիստրատուրայի առաջին փուլի ընդունելության արդյունքների մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից առցանց նիստին մասնակցում է 26-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ քննաշրջանից հետո բակալավրիատի առկա

ուսուցման առաջին կուրսում պարտքեր ունեն 17, երկրորդում՝ 32 և երրորդում՝ 20 ուսանողներ: Մագիստրատուրայում քննաշրջանից հետո կա պարտք ունեցող 6 մագիստրոս: Հեռակա բաժնում պարտք ունեցողներ կան միայն երկրորդ կուրսում /10 ուսանող/: Դոց. Ա. Սարգսյանը նաև ընդգծեց, որ նախորդ տարիների նման պարտք ունեցող ուսանողների մեծ մասը պարտք ունի մեկ առարկայից:

Օրակարգի 2 - թղ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ Բ. Գ. Թ. , դոց. Ա. Սարգսյանին, ով ընթերցեց հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ Բ.Գ.Դ., պրոֆ. Գայանե Գևորգյանի հաշվետվությունը, որում մասնավորապես նշված էր.

2020-21 ուստարում «Հայոց լեզու» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել բակալավրի 8 ուսանող: Մեկ ուսանող ստացել է 19 միավոր, երեք ուսանող՝ 18 միավոր, երեք ուսանող՝ 16 միավոր, մեկ ուսանող՝ 15 միավոր:

«Հայ գրականություն» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել յոթ ուսանող: Մեկ ուսանող ստացել է 18 միավոր, մեկ ուսանող՝ 17 միավոր, երկու ուսանող՝ 16 միավոր, մեկ ուսանող՝ 15 միավոր, երկու ուսանող՝ 13 միավոր:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունը կազմակերպվել է առցանց: Այն անցել է գործող ընթացակարգին համապատասխան, բողոքարկումներ չեն եղել:

Պաշտպանության ներկայացված ավարտական աշխատանքները հիմնականում համապատասխանում էին ներկայացվող պահանջներին, բովանդակային առումով դրանք հիմնականում ունեին որոշակի մակարդակ, շարադրված էին գիտական ոճով: Դրանցում նշված էին աշխատանքի նպատակը, խնդիրները, ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ներկայացված էր համապատասխան գրականությունը:

Հիմնականում պահպանված էին նաև կառուցվածքային, տեխնիկական պահանջները: Կային նաև ոչ շատ հաջողված աշխատանքներ, որոնք համեմատաբար ցածր գնահատվեցին:

Ըստ սահմանված պահանջի՝ ուսանողները պաշտպանության ներկայացրին լուսապատկերային ցուցադրություններ, որոնց մեջ կային բավականին հաջողվածները:

Ուսանողները հիմնականում ունեին բավականին լավ գիտելիքներ, կարողանում էին ներկայացնել իրենց կատարած աշխատանքը, պատասխանել հարցերին: Կային նաև մի քանի ոչ շատ հաջող պատասխաններ:

Ընդհանուր առմամբ ուսանողների մասնագիտական գիտելիքները համապատասխանում էին պահանջվող մակարդակին, և բավարար գնահատականներ չեղան: Աշխատանքներում հիմնականում ճիշտ էին պահպանված նաև տեխնիկական պահանջները: Աշխատանքների թեմաները մեծ մասամբ արդիական էին:

Ներկայացված աշխատանքների ընդհանուր որակը, ուսանողների պատրաստվածությունը վկայում էին, որ աշխատանքը ղեկավարող դասախոսները և համապատասխան ամբիոնները իրենց աշխատանքը կատարել են անհրաժեշտ մակարդակով:

Գրախոսները ևս իրենց կարծիքները ներկայացրին պատշաճ կերպով: Ավարտական որոշ աշխատանքներում կար վերլուծականության պակաս: Ցանկալի է, որ ուսանողները եղած կարծիքներն ու տեսակետները վերլուծաբար ներկայացնեն:

Ինչպես նշվեց, ավարտական աշխատանքների պաշտպանությունը կազմակերպվել էր առցանց, սակայն տեխնիկական խնդիրներ գրեթե չառաջացան: Պահպանված էին ընթացակարգային պահանջները, որը վկայում է ֆակուլտետի ղեկանի և ղեկանատի աշխատակիցների լավ աշխատանքի մասին:

Այնուհետև դոց. Ա. Սարգսյանը ընթերցեց հեռակա ուսուցման բակալավրիատի՝ մանկավարժի որակավորման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ բ.գ.դ., պրոֆ. Վաչագան Գրիգորյանի հաշվետվությունը, որում մասնավորապես նշված էր.

2020-21 ուստարում հայ բանասիրության ֆակուլտետում հեռակա ուսուցմամբ բակալավրիատի՝ մանկավարժի որակավորման ավարտական ամփոփիչ քննություն է հանձնել 13 ուսանող:

20 միավոր գնահատվել է մեկ ուսանող, 19 միավոր՝ մեկ ուսանող, 18 միավոր՝ երեք ուսանող, 17 միավոր՝ մեկ ուսանող, 15 միավոր՝ չորս ուսանող, 13 միավոր՝ մեկ ուսանող, 10 միավոր՝ մեկ ուսանող, 8 միավոր մեկ ուսանող:

Քննությունն անցել է գործող ընթացակարգին համապատասխան, բողոքարկումներ չեն եղել:

Քննությունը կազմակերպվել է առցանց: Յուրաքանչյուր հարցատոմսում ներառվել է երեք հարց. առաջին հարցը վերաբերում էր մանկավարժությանը, երկրորդը՝ հայոց լեզվի կամ հայ գրականության դասավանդման մեթոդիկային, իսկ երրորդ հարցը գործնական բնույթի էր. պահանջվում էր ներկայացնել հայոց լեզվի կամ գրականության որևէ դասի վարում:

Ուսանողներն ընտրել են առաջարկվող երեսուն հարցատոմսերից մեկը, որը բոլոր մասնակիցների համար տեսանելի ներկայացվել է էկրանին: Ուսանողներին տրվել է նախապատրաստվելու ժամանակ:

Գնահատականների բազմազանությունը՝ ութից մինչև քսան, ցույց է տալիս, որ քննության մասնակցել են թե՛ լավ պատրաստված, թե՛ համեմատաբար վատ պատրաստված ուսանողներ: Սակայն գնահատականների գերակշիռ մասը տասնհինգ և ավելի միավոր է, որ ցույց է տալիս, քննությանը մասնակցած ուսանողների մասնագիտական գիտելիքները ընդհանուր առմամբ համապատասխանում էին պահանջվող մակարդակին: Ուսանողները հիմնականում կարողանում էին պատշաճ կերպով ներկայացնել հարցատոմսերում ներառված հարցերի պատասխանները, պատասխանել հանձնաժողովի հարցերին:

Ինչպես նշվեց, հացատոմսերում ներառված երրորդ հարցը գործնական բնույթի էր: Ուսանողները պատասխաններին զուգահեռ ներկայացրին լուսապատկերային ցուցադրություն:

Քննության մասնակցած ուսանողների պատրաստվածության ընդհանուր որակը վկայում է, որ ուսումնառության ընթացքում մանկավարժական կրթաբլոկի դասընթացները հիմնականում ճիշտ և արդյունավետ են կազմակերպվել: Այնուամենայնիվ պետք է ասել, որ որոշ դեպքերում ուսանողները ավելի շատ փորձում էին տեսական նյութը ներկայացնել և դժվարանում էին ներկայացնել ու վերլուծել դասավանդման մեթոդաբանական առանձնահատկությունները: Ցանկանում ենք հրավիրել համապատասխան ամբիոնների ուշադրությունը, որպեսզի ուսուցման ընթացքում ավելի մեծ ուշադրության արժանանա գործնական հմտությունների զարգացմանը:

Քննությունն առցանց էր կազմակերպվել, սակայն ընդհանուր առմամբ հաջողությամբ անցկացվեց, տեխնիկական էական խնդիրներ չեղան: Քննության անցկացման չորս օրերի ընթացքում պահպանվեցին ընթացակարգային պահանջները:

Օրակարգի երրորդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ այս տարի մագիստրատուրա առաջին փուլով <<Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ>> մասնագիտությամբ դիմել է 5 ուսանող, <<հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն>> մասնագիտությամբ՝ 8 ուսանող, <<հայ գրականության պատմություն>> մասնագիտությամբ՝ 2 ուսանող, <<հայ նորագույն գրականություն և գրաքննադատություն>> մասնագիտությամբ՝ 5 ուսանող, <<համաշխարհային գրականություն և գրականության տեսություն>> մասնագիտությամբ՝ 2 ուսանող:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ